

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարւան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առիթներէն).

Յայտարարութիւնը ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Կիրակի, յունիսի 3-ին, ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆԻ ՄԵՐ ՈՂԲԵՐԳՈՒ ՊԵՏՐՈՍԱԴԱՄԵԱՆԻ

մահվան տաճարակալի առիթով, կուկիայի Թանգոյանս. Աստուածածին եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին: Պատարագի սկիզբն է առաւօտեան 10 ժամին եւ հոգեհանգստինը՝ 11 ժամին:
Հոգեւորականներին առանձին հրաւեր չի լինի:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Արձագանքներ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀԵՌԱՅԻՐԵՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դարձեալ քահանայական հարցը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Իմ անցեալ զրոյցը նուիրված էր մի մեծագործ հարուստ մարդու: Այդ գեղեցիկ օրինակը ձեզ ցոյց տալու համար ես դուրս եկայ մեր ներկայ կեանքի սահմաններից, մտքի ձեզ օտար ազդի կեանքի մէջ: Այժմ ուզում եմ ասել ձեզ, որ մենք, հայերս էլ, մի ժամանակ այսօրվայ պէս զբաղող չէինք եղել: Այո, եղել է մի ժամանակ, երբ մենք էլ ունեցել ենք արժանաւոր մարդիկ: Դրանցից մէկին հետ ծանօթացելու համար ես այս անգամ էլ դուրս կը գամ մեր ժամանակակից կեանքից եւ կը տանեմ ձեզ դէպի մեր անցեալը:

Երէկ դուք կարդացիք «Մշակում», որ Մօսկվայի հայերը պատրաստվում են ածել Յովհաննէս Լազարեանի մահվան հարիւրամեայ տարեդարձը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

(Շարունակութիւն)

Մենք արդէն բաւականաչափ ծանօթացանք մեր քննադատի հետ. տեսանք, թէ ինչ հայկացիներն են, ու տեսանք, թէ ինչ հոգի է ղեկավարել նրան այդ գրքը գրելիս: Մինչեւ իսկ սկզբունքի հարցեր չօղափելիս, Մեսրոպ քահանայ Մեկեան չէ կարողացել թագնել իր անչափ հակառակադրութիւնը. պատահում են տողեր, որոնք այն տպաւորութիւնն են թողնում, որ եթէ Արիստակէս եպիսկոպոսը ասելու լինի, թէ արեւելիկ արեւելիկից է դուրս գալիս, Մեսրոպ քահանան պատրաստ կը լինի հակառակը պնդելու:

Հէնց այս է նրա գրքի ամբողջ գաղտնիքը: Դուրս գցեցէք այնտեղից պատահական դատողութիւնները, ծակ փրկութիւնները, եւ ձեր առջեւ բաց կը լինի Մեկեան քահանայի ամբողջ սիստեմը: Քահանայական խնդիրը գրքի բովանդակութիւնը չէին կարող կլանել նրանք, որոնք այդ խնդրի ներկայ ցաւալի, հիւանդոտ դրութեան պատճառներն են: Ինչ անել այդ մեղադրական ծառը ոչնչացնելու համար: Այժմ ինչ թողնել եւ, կամ ողբ բարձրացնել, կամ հաստատել, որ Արիստակէս եպիսկոպոսն էլ մի առանձին բան չէ ներկայացնում, որ նա էլ ոչինչ չէ արել, որ նա էլ իր երկարատեւ գործունէութեան միջոցին ունեցել է պակասութիւններ: Այսպէս է Մեսրոպ քահանայի մեթոդը: Այսպէս է էլ «Արարատի» ու «Լուսնայի» մէջ կուրծք ծեծողները: Այնպէս որ մենք կարող ենք միանգամայն հաւատարմացնել իրեն, որ անկարգութիւնները, կաշառակերութիւնները, սրբաւիճառութիւնները «ամեն տեղ այսպէս է» խօսքերով արդարացողները այլ եւս ուրիշ միջոց չունեն «Քահանայական

Իմ խօսքը այդ Յովհաննէսի մասին կը լինի: 1801 թւականի սեպտեմբերին վախճանվեց Պետերբուրգում կոմս Յովհաննէս Լազարեանը: Ո՞վ էր դա: Նոր-Ջուղայից իր հօր հետ Ռուսաստան գաղթած մի հայ վաճառական: Մօսկվայում այդ գաղթական ընտանիքը շարունակեց իր առեւտրական եւ արդիւնաբերական գործունէութիւնը, հարստութիւններ դիզեց եւ հռչակվեց: Հռչակաւոր են, այո, Լազարեանները: Բայց մենք գիտենք այն բոլոր գործերը, որոնք հռչակել են Լազարեաններին:

Առաջին աստղը, որ փայլ տուեց այդ հոյակապ ընտանիքին, Յովհաննէս Լազարեանն էր: Նա ընտանիքին հաստատեց Պետերբուրգում, պետական ծառայութեան մէջ մտաւ, պատուում էր բարձր արիւստրատական, պալատական չորաններում: Բաղդը ամեն կերպ հովանաւորում էր այդ մարդուն. հարուստ, յայտնի, ամեն տեղ ընդունված, աւստրիական կայսրից կոմսութեան տիտղոս ստացած ինչ էր պակասում այդ երջանիկ մեծատունին:

Նա ուներ մի հիանալի կալուածք, Բօլշա անունով: Այդտեղ շատ անգամ են հիւրերի պէս իշել թագաւոր անձներ, այդտեղ աւստրիական կայսրն էր լինում, ֆրանսիական թագաւորը տան պրինցներն էին սիրալիբ հիւրավորութիւն գտնում: Ռուսաց արքունիքը շատ մօտ էր Լազարեանի ընտանիքին. թէ Եկատերին

խնդրէր գրքը ոչնչացնելու համար:

Ինքն ըստ ինքեան, սա մի շատ ողորմելի միջոց է, ինքն ըստ ինքեան այս բոլոր հառաչանքները, ախ ու վախերը, Բարսեղներին ապաւինելը, կանոնական հարցեր ծեծելը անհարութեան, կատարեալ անհարութեան նշաններ են, որոնք կարող են ամենից լաւ, ջանջալիք վկայութիւնները դառնալ անկարգութիւնների, յետաձգանքութեան փաստաբանների դէմ:

Անա Մեսրոպ քահանան ամենամեծ հաճութեամբ ձեռք է առնում Արիստակէս եպիսկոպոսի անձնաւորութիւնը: Ինչ է գտնում նրա մէջ: Կաշառակերութիւն, սիմոնիականութիւն, տղէտ քահանաների հովանաւորութիւն, եկեղեցական քարակարգութիւնների դէմ թշնամութիւն: Ոչ մէկը: Բայց եւ այդպէս, Մեկեան ասում է, թէ Արիստակէս եպիսկոպոսը ոչինչ չէ արել, որ նա էլ պակասութիւններ չառնուին:

Մենք միայն մի քանի նմուշներով ցոյց կը տանք, թէ ինչպէս է Մեկեան քահանան այդ բոլորը պայցուցանում:

Ինչպէս յայտնի է, «Քահանայական խնդիր» գրքի մէջ մօտ 60 երես է գրաւում Արիստակէս եպիսկոպոսի այն յայտարարութիւնը, որ նա ուղարկել է Էջմիածնի Սինոդին 1889 թւին, երբ Թիֆլիսի առաջնորդ էր: Մանրամասն խօսել այդ նշանաւոր դոկումենտի մասին մենք այստեղ չենք կարող. բայց նրան մի անգամ կարդացողը կը հասկանայ, թէ որքան ճիշտ ու հարուստ մի փաստաթուղթ կը դառնայ այդ յայտարարութիւնը ապագայ պատմաբանի համար, երբ նա կը սկսէ զբաղվել մեր հասարակական եւ կրթական հարցերով: Արիստակէս եպիսկոպոսը այդտեղ չօղափում է բազմաթիւ հարցեր, բերում է բազմաթիւ դոկումենտներ: Մեկեան քահանան այդ ընդարձակ գրութիւնից դուրս է գլխի մի քանի նախադասութիւններ եւ դրանց վրա լարախաղութիւններ է կատարում:

Թայտնի է, թէ որքան վատ, դատապարտելի

նա, թէ Պաւլը եւ թէ այնպիսի հռչակված մարդիկ, ինչպէս են Սուվորով, Պոտեմկին, Բուսիանցով եւ ուրիշները, Յովհաննէս Լազարեանին ճանաչում էին շատ մօտիկուց, լինում էին նրա հիւրասէր յարկի տակ: Ինչն էր պակաս:

Ոչինչ: Յովհաննէսը հասել էր փառքի եւ երջանկութեան այնպիսի մի բարձրութեան, որ մարդու գլուխը չէր կարող չը պտոյտ գալ, չը չլնել. ինքնամոռացութիւնը, հպարտութիւնը հէնց այդ աստիճանների վրա են յափշտակում մարդուն եւ դարձնում նրան մի գոռոզ իշխան, մի եսամոլ, ամեն ինչ արհամարհող մի անմառայելի կուռք:

Բայց Յովհաննէս Լազարեանը այդպէս չէր իր փառքի գագաթնակէտից էլ նա միշտ աչքը դրած ունէր հայ ազգի վրա եւ նրա հոգու միակ միութարութիւնն էր մի բան անել այդ ազգի համար, ծառայել այդ խեղճ ու ստրուկ ազգին, ծառայել իր մեծ արտի ամբողջ կարողութեամբ:

Այն ժամանակ, երբ պալատական հանդէսները, գանազան տօնախմբութիւնները, փառաւոր ճաշերը, ճանապարհորդութիւնները, զուարճութիւնները յաջորդում էին իրար, դարձնելով Յովհաննէս Լազարեանի կեանքը բազմազան տպաւորութիւնների մի անվերջ շարան, — հայ ազգը ողորմելի մի ապեալ էր: Տանջվում էր թայ հինաւուրց ստրուկը. տանջվում էր Պարսկաստանի երկաթի լուծի տակ, տանջվում էր Թիւրքիայում: Մի ուրիշը, Յովհաննէս Լազարեանի պէս մի փայլուն արիւստրատի տեղ, ինքնաբեր կը ծածկէր իր ծագումը, կաշխատէր ցոյց տալ, թէ չէ պատկանում մի այդպիսի ազգին, որ ծածկված էր դարերի կեղտոտ վէրքերով: Բայց Լազարեանը բաց ճակատով, չիտակ սրտով մերեց այդ վէրքերը, նուիրվեց նրանց բժշկութեան: Նա խնդրում էր ամեն տեղ, ուր կարելի էր, նա երբեք չը մոռացաւ, որ այդ գեղեցիկագոյն գիւղերի ձեռքից բնուող պիտի լինի, նրան բարձրացնող պիտի լինի:

է այս միջոցը քննադատութեան մէջ: Բնադատ չէ նշանակում բառակեր, քննադատութիւնը մասն, նեղախոս բծախնդրութիւն չէ: Նա պիտի զանազան կարեւորը եւ անկարեւորը, նա պիտի ընդգրկէ ընդհանուրը, ամբողջութիւնը եւ ոչ թէ ճանձի պէս կպչէ մի մանր կէտի եւ այդտեղից եզրակացութիւններ դուրս բերէ: Այդ մեծ գրութիւնից Մեսրոպ քահանան պիտի տեսներ, թէ որպիսի անկարգութիւն է տիրում մեր հոգեւոր գործերի մէջ, թէ ինչպէս բացակայում է այնտեղ հաստատ, որոշ, ամենքի համար պարտաւորական օրէնքը, որի տեղ թագաւորում է փաշայական քանաճառութիւնը, մանր քննախնդրութիւնը: Արիստակէս եպիսկոպոսը իր իշխանութեամբ ձեռնադրել է քահանաներ, դրա համար յանդիմանութիւն է ստացել սինոդից եւ գրել է իր բացատրութիւնը: Ի միջի այլոց, նա առաջ է բերել եւ փաստեր առաջնորդական պրակտիկայից, որոնք ապացուցանում են, թէ իրանից առաջ էլ եղել են այդպիսի քահանայական ձեռնադրութիւններ: Եւ ձեռնադրողը եղել է հէնց այն Մակարը, որ այժմ իբրեւ կաթողիկոս յանդիմանում էր Արիստակէսին: Մակարի այդ արարքը ուղղակի փաշայութիւնն էր: Ինչ եւս եմ արել, լաւ է, ինչ դու ես անում՝ վատ է: Սկզբունք, օրէնք, կանոն չը կայ: Երբ մի եպիսկոպոս, թէկուզ 16 հոգեւորականի միջոցով (Արիստակէսի ամբողջ մեղքն այն էր, որ նա չը կար այդ 16-ի մէջ), արժանի է համարվում կաթողիկոսական բարձր աստիճանին, ներքի պիտի լինէր կարծել, որ նա շատ լաւ է հասկանում եկեղեցական կարգերը, առաջնորդական պարտաւորութիւններն ու իրաւունքները: Արիստակէսը, իբրեւ առաջնորդ, ցոյց էր տալիս, թէ ահա Մակարն էլ նոյն բաներն է արել եւ դրա համար ոչ միայն չէ պատժվել, այլ եւ կաթողիկոս է դարձել:

Մեկեան քահանան ասում է. «Միթէ մէկի յանցաւորութիւնը իրաւունք է տալիս մի ուրիշին եւս յանցագործ լինելու»: Ինչ յանցանք,

եւ արաւ նա շատ բան: Եկատերինայի ժամանակ, երբ հայկական անկախութեան հարցն էր չօղափում, Յովհաննէս Լազարեանի տունն էր այն տեղը, որ հաւաքվում էին, խօսում էին, ընկնում էին: Յովհաննէս Լազարեանն էր տանում Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանին կայսերական պալատը, ծանօթացնում էր բարձրաստիճան մարդկանց հետ. նա էր Արղութեանի խորհրդատուն, թեւեւ ու թիկունքը: Ինչ կը լինէր, եթէ Արղութեանը չունենար այդպիսի մի բարեկամ, ապաւէն, աջակից: Շատ եւ շատ բան նա անկարող կը լինէր անել, եթէ չը լինէր իր ազգի այդ սրտացաւ, հարգաւոր զաւակը:

Ձէ կարելի գրել այդ երկարատեւ գործունէութեան պատմութիւնը: Նիւթը չը կան...

Վերջին բարեբարութիւնը, որ նա արաւ իր ազգին, այն էր, որ մի գուժար թողեց իր եղբայր Յովակիմին, կապելով, որ այդ փողով զարոց բացվի հայերի համար: Բացվեց այդ զարոցը. դա այժմեան Լազարեան ճեմարանն է: Անա Յովհաննէս Լազարեանը, երա ժամանակ կային եւ ուրիշ մեծագործ հայեր, Բաւական է յիշել Սամուէլ Մուրադեանին: Եւ ծանօթանալով այդպիսի լաւ հայերի հետ, մենք ակամայ նախանձում ենք մեր հայրերին ու պապերին: Այո, նրանք մեղաւոր աւելի երջանիկ էին: Նրանք, ճիշդ է, զոքաղ էին, հարստահարված. բայց դիմում էին դէպի լաւ ապագայ, ջանքեր էին անում բարեբաղդութիւն ձեռք բերելու: Մենք այսօր հանգիստ ու խաղաղ ենք ապրում, բայց աւելի զոքաղ ենք, որովհետեւ ապագայի իդէալ չունենք եւ գուրկ ենք Լազարեանների, Մուրադեանների պէս մարդկանցից:

Չուրկ ենք, ուրեմն գոնէ պիտի երախտագրութեամբ յիշատակենք անցած-գնացած մեր գործիչներին: Յովհաննէս Լազարեանը միայն Մօսկվայի հայերի բարեբարը չէ, այլ բոլոր ռուսահայերի: Եւ այդ մեծագործ հայի յիշատակը պիտի ածնվի ոչ միայն Մօսկվայում,

ինչ յանցագործ: Հաստատել է Մեկեանը, թէ Սեդրակեանի արածը յանցանք է:—Ո՛չ, ինքը, Սեդրակեանը, խոստովանում է, թէ յանցանք է գործել:—Ո՛չ, ընդհակառակն, նրա ամբողջ յայտարարութիւնը հէնց այն միտքն ունի, որ ապացուցանէ թէ իր արածը եղել է օրինական, հաստատված աւանդութիւնների, կանոնների վրա: Եւ Մեկեանը քշում է իր փայտի ձին, հեծած իր գտած ու ոչնչով չը հաստատած «յանցանք», «յանցագործութիւն» բառերի վրա:

Երկրորդ սոսկալի փաստը, որ Մեկեան դուրս է գլխի Արիստակէսի յայտարարութիւնից հետեւան է: Արիստակէսի ձեռնադրած քահանաներից մէկը եօթ օրվայ ամուսնացած է եղել: Սա մի մեծ հարց է դառնում—կարո՞ղ է մեղաւորաւին լինել քահանայի համար, թէ չէ: Մեկեան քահանան վճռում է այս զարմանալի մեծ եւ զարմանալի կենսական հարցը, բերելով վերկայութիւն, թէ սարկաւազները պիտի օրդինը իր տէր լինեն. ուրեմն քահանայ ձեռնադրուող համար պէտք է ունենալ ձեռնադրուող ապաստելու ոչ միայն մեղաւորանի անցնելուն, այլ եւ այն ժամանակին, երբ տէրտէրի կիրք զաւակ էլ կը բերէ: Այն էլ ոչ թէ մի զաւակ: Տառակեր կազմիւսների համար հատորների նիւթ կարող է դառնալ Պօղոս առաքելի շուրջը իւրեանց խօսքերը: Առաքելաւ յոգնակի է հասկանում քահանայի օրդինների թիւը: Նա չէ որոշել, թէ քահանան քանի օրդիններ պիտի ունենայ, բայց երեւի Բարսեղները, Ոսկերեանները որ եւ է ընդհանր խօսած կը լինեն եւ այս ձեւի մասին: Միւսում է, որ Մեսրոպ քահանան այդ թիւն էլ որոնել ու գտնէ: Այն ժամանակ հօ Արիստակէս եպիսկոպոսի «յանցանքը» աւելի կը ծանրանայ եւ դուք, տէր հայր, գոհութեամբ կը չիէք ձեր ձեռքերը, որ լուծեցիք քահանայական հարցը, ապացուցանելով, որ Արիստակէս եպիսկոպոսը ոչինչ չէ արել:

Երրորդ սարսափելի փաստ: Արիստակէս եպիսկոպոսը ասել է. «Մենք էլ հարկաւորված

այլ ամեն տեղ, ուր ինքն իրան ճանաչող հայ կայ:

Սպասենք եւ յուսանք: Բայց այժմից չենք կարող չի հրաւիրել Մօսկովայի յանձնաժողովի ուշադրութիւնը մի կարեւոր հանգամանքի վրա: Լազարեանների տոհմը բաւականաչափ յայտնի չէ ազգին: Ունենք այդ տոհմի անդամների կենսագրութիւնները, բայց դրանք շատ են համառօտ, շատ են թուլացիկ: Ժամանակ է, որ Լազարեան ճեմարանը բաց անէ իր արխիւը նիւթեր հրատարակելու համար: Լազարեանների առատ նուէրներով գեղեցիկ կերպով ապահովված ճեմարանը պարտաւոր է մի քիչ երախտագէտ լինել իր հիմնադիրների եւ մեկնասանների վերաբերմամբ: Նա պարտաւոր է հրատարակել Լազարեանների այն բոլոր թղթերը, որոնք այժմ պահվում են ճեմարանում: Եւ այս գործի նախաձեռնութիւնը մենք սպասում ենք Մօսկովայի յանձնաժողովից:

Երեւելի գործիչների յիշատակը յաւերժացնելու ամենալաւ միջոցն է ժողովրդականացնել նրանց արածները, բաց անել նրանց կենսաքիչ եւ գործունէութեան մանրամասնութիւնները: Հանդիսաւոր ճաշերը, ճոճոսն ճառերը մոռացվում են, հոգեհանգստի մաղթանքներն ու խոսնիկ ծուխը նոյն օրն են չքանում: Գործերն են յաւերժանակութիւն ստեղծում:

Ուրեմն, տուէք մեզ այդ գործերը: Մի թողէք, որ նրանք ցեղի մէջ արխիւային փոշու կերակուր դառնան...

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
XLIX

Ուղիղ տաս տարի արանից առաջ, 1891 թվ. յունիսի 3-ին, մեռաւ հայ ազգի ամենամեծ զաւակներից մէկը, Աղաւթեան, որ մարմնացած ողբերգութիւն էր ոչ միայն բնութեւ, այլ եւ իր կենսաբանութեամբ, որին վաղաժամ վերջ տուեց թոքախտը:

Օժոված բնութիւնից այնպիսի հարուստ ու բազմակողմանի ձիրքերով, ինչպէս օժոված էին լինում միայն վերածնութեան դարի լատինացի գեղարուեստագէտները, Աղաւթեան ստիպված էր պատանի հասակում աշակերտ մտնել ժամագործի օժտ, այնուհետեւ մի խառնութեան մօտ, որովհետեւ նրա հայրը չէր ուզում, որ նա այնպիսի «լիմարութիւններով» զբաղվի, ինչպէս է գիրքը կամ բնութիւնը: Բայց ապագայ չնորոյի նկարիչ, համակրելի բանաստեղծ եւ հուշակաւոր դերասան Աղաւթեան չէր ուզում «սովորաբար դառնալ» նրան արտաքին իր մօտիկ ժամագործի: Նրան արտաքին իր մօտիկ ժամագործի, որովհետեւ, ինչպէս ասում են, իր հաշուեգրքերում

ենք եղել երբեմն վարվելու նախնաւանդ եկեղեցական կանոններով, որպէս զի կարողութեան չափ հատուցած լինենք մեր առաջնորդական պարտքը դէպի հօտը: Մեսրոպ քահանան «երբեմն» բառը՝ քահանաներ ձեռնադրելուն վերաբերվող խօսքերից դուրս է քաշում եւ դնում է «առանցնորդական պարտք» բառերի կողքին: Եւ ապա, հիացած իր այդ հերոսութեան վրա, բացականչում է. «Բայց ինչ ասել է առաջնորդ, որ երբեմն է մտածում հատուցանելու իր առաջնորդական պարտքը դէպի հօտը» (եր. 25): Այդ հարցը թողէք, տէր հայր, դատաւորը դեռ պիտի լինէ: Դուք այն ասացէք, ինչ ձեռք է դա, ինչ անուն ունի՝ ձեր այդ վարմունքը: Անբարեխղճութիւն, այնպէս չէ, ուրիշ արժանաւոր անուն չունի ձեր այդ հերոսութիւնը: Գրականութեան մէջ դա ամօթալի, արատաւոր մի քաղաքործութիւն է, որ միայն զգուշանք կարող է յարուցանել...

Մի այլ օրինակ: Մեսրոպ քահանան կարողում է, որ Արիստակէսը Շուշում մի քանի տիրացուներ է հաւաքել, յանձնել թեմական դպրոցի ուսուցիչներ Աղայեանցին, Յովհաննիսեանցին, Տէր-Լազարեանցին եւ Ղուկեբեխեանցին, որպէս զի սրանք տիրացուներին մի քանի առարկաներ աւանդեն: Կարողում է այս տողերը Մեկնան եւ ասում է. «Այսինքն ընծայարաններ է բացել: Ու էլի սկսում է աղմուկ, հարայ-հրոց: Բարեխիղճ մարդը առանց ուշադրութեան չէր թողնի, որ Արիստակէսը այդ միջոցը գործ է դրել «անճարութիւնից», ինչպէս ինքն է ասում, որ նա քահանայ ձեռնադրող չէր, որպէս զի դիմադրէր տգէտների ձեռնադրութեան: Ի՞նչ նմանութիւն կայ մի փոխանորդ վարդապետի՝ անճարութիւնից գործադրած այս ժամանակաւոր միջոցի եւ մշտական հաստատութեան, սիստեմի բնաւորութիւն կրող ընծայարանների մէջ: Ոչինչ, ի հարկէ, բայց Մեկնան ինչ գործ ունի այսպիսի հարցերի հետ. նրան հարկաւոր է միայն կլի առաւել

թուանչանքների տեղ եւ թուանչանքների կողքին գտնում էր զիմագծեր ու ուրուագծեր, նկարված պատանի գործակատարի ձեռքով:

Հայրը փորձում է զինուորական դարձնել որդուն: Բայց այդ էլ չէ աջողվում: Փոխանակ զինավարժութեամբ զբաղվելու, ապագայ դերասանը վէպեր է կարդում, ոտանաւորներ է գրում:

Այդ ժամանակ Աղաւթեան առաջին անգամ տեսնում է իր կիսանդուն թատրոնական շնորհալուստի մի միջկատակութիւն, պատմութեամբ, եւ այնուհետեւ, ամեն ինչ թողած, սկսում է երազել միայն բնութեւ մասին:

Վերջապէս հայրը ծանօթանում է թատրոնագետ Սրապիոն Հեքիմեանի հետ եւ համոզվելով, որ իր որդուց ամբողջ չի դուրս գալ, թոյլ է տալիս նրան բնութեւ մասին:

1866 թվ. առաջին անգամ բնութեւ դուրս գալիս նա, որ պէտք է դառնար հայ բնութի պարծանքը: Մեծ դեր չէր Աղաւթեանի առաջին դերը: Նա պէտք է արտասանէր երկու խօսք միայն՝ «Մեղիք, դաւաճան»: Բայց, իբրեւ իսկական տաղանդ, նա մի քանի օր գիրք-ցերեկ ուսումնասիրել, պատրաստել էր այդ խոշորացուցային դերը, եւ դարձեալ, իբրեւ իսկական տաղանդ, կարողացաւ ապաւորութիւն գործել նոյն իսկ այդ երկու խօսքով:

17 տարեկան էր այդ ժամանակ Աղաւթեան: Այնուհետեւ, իր բնական գործունէութեան երկրորդ տարին՝ Աղաւթեան մտնում է Ֆասուլաճեանի խումբը եւ այդ խմբի հետ գալիս է Ռուսաստան, Նոր-Նախիջեան: Բայց այդ ժամանակ հրեղէն լափում է նրա հօր ամբողջ գոյքը, մի քանի տներ, եւ Աղաւթեան ստիպված է լինում վերադառնալ Կ. Պօլս, հօրը օգնելու եւ միջնորդելու համար: Վշտահար հայրը մեռնում է չուտով, թողնելով Պետրոսին առանց միջոցների, եւ վերջինս ստիպված է լինում, օրվայ հացը վատակելու համար, պարսպել նկարչութեամբ, միմիայն երբեմն երբեմն երեւան գալով բնութեւ վրա:

Պայմանները, ինչպէս տեսնում էք, ամենամեղմագիտ կերպով են դասաւորվում Աղաւթեանի համար: Սակայն դուր չէ ասում ուսուցանողը, թէ «Մանր մուրճը փշրում է ապակին, բայց կոտւմ է պողպատը»: Աղաւթեան չէ յուսահատվում եւ շարունակում է դարձնել իր մեծ ապագան: Նա սովորում է եւրօպական մի քանի լեզուներ, ծանօթանում է թատրոնական գրականութեան հետ եւ ուսումնասիրում է զանազան դերեր, մանաւանդ Շէքսպիրի պիէսներին:

1873 թվ. Աղաւթեան մեկնում է գտնում յանձին Յակոբ Բէյ Պալանի եւ առաջին դե-

ղա: Այսպէս է եւ այն ակնարկութիւնը, որի միտքն է՝ հասկանալ, թէ եպիսկոպոսական աստիճան Արիստակէսը ստացել է Գէորգ կաթողիկոսից իբրեւ վարձատրութիւն տգէտ քահանաներ բազմացնելու մէջ նրա ցոյց տուած եռանդի համար... Երեւում է, որ տէրութեան աշխարհում ուրիշ չափ ու հասկացողութիւն չը կայ:

Արիստակէս եպիսկոպոսը Մակար կաթողիկոսին տուած իր մի յայտարարութեան մէջ այն միտքն է յայտնել, թէ թիֆլիսի քահանաների վերաբերմամբ պէտք է այսպէս վարվել, իրանց կոչում համապատասխանորէն պահել քաղաքում, աւելորդներին, չը անապատասխանողներին ուղարկել գաւառները: Այստեղից Մեսրոպ քահանան դուրս է բերում մի անագին կանչկոտոց, որով լցնում է իր գիրքը մինչեւ վերջը: Տեսէք, ասում է, Արիստակէս եպիսկոպոսը միայն թիֆլիսի մասին է մտածում, գաւառները նրա համար ոչինչ են, այդտեղ է ուղարկում նա «տգէտ, հրէշ, թուկից փախած» քահանաներին: Թուկից փախածներին չէր ուզում գաւառ ուղարկել, տէր հայր, այլ այնպիսիներին, որոնք թիֆլիսի պէս մի քաղաքում անհամապատասխան են իրանց կոչման: Թուկից փախածները մասին նա ուղղակի ասում է, թէ այդպիսիներին պէտք է արձակել եկեղեցուց ապաստարանութիւնից: Մեսրոպ քահանան ականջները խցած՝ միայն աղաղակում է, թէ Արիստակէսը չէ սիրում գաւառները, վատ քահանաներին այնտեղ է ուղարկում: Եւ մի եւ նոյն ժամանակ, երբ նոյն Արիստակէսը նոյն թիֆլիսի թեմում Սագաբէջօի քահանային հեռացնում է անգրագիտութեան պատճառով, Մեսրոպ քահանան սկսում է կուրծք ծեծել, Բարեպետների փէշից կախվել, երկինք ու երկիր իրար խառնել: Եւ մի եւ նոյն ժամանակ չէ նա գրում է. «Թեմական վերաբնակութեան պաշտօնավարութեան ժամանակ թէ թիֆլիս քաղաքում եւ թէ վրձնակում միշտ լսել եմ վը-

րեր է կատարում թատրոնագետ Մաղաքեանի խմբում, որ կանոնաւոր ներկայացումներ էր տալիս Օրթոդոքս թատրոնում»:

1879 թվ. նոր ու փառաւոր չըլան է սկսվում Աղաւթեանի կենսաբան: Այդ թվ. նա գալիս է Թիֆլիս եւ դառնում է ամենափայլուն աստղը հայ բնութի այն ժամանակվայ չքեղ համաստեղութեան մէջ:

Ի՞նչ էր Աղաւթեան այն ժամանակ եւ ի՞նչ եղաւ նա ուսուցանելու համար՝ այդ յայտնի է ընթերցողներին:

Շատ քիչ հայ գործիչ է թողել իրանից յետոյ այնքան մեծ հետք, որքան Աղաւթեան:

Եւ սակայն ինչ էր իսկապէս Աղաւթեան՝ չեւրասիան, տաղանդաւոր, գրեթէ հանճարեղ, բայց այնուամենայնիւ դերասան, որ փայլում է այնպէս, ինչպէս ծիածանը, ինչպէս գիտաւոր աստղը, բայց եւ չքանում, անհետանում է նրանց նման:

Բանաստեղծը շարունակում է ապրել իր գրքերում, քանդակագործը արձանացնում է իր հոգին մարմարի միջոցով, նկարիչը գործում է իր ներքին աշխարհը կտաւի օր գիրք-ցերեկ դերասանի ձայնը իր երեւելիքով, դէմքի արտայայտութիւնը իր միմիկայով՝ կորչում են անհետ, ցնդելով օդի մէջ:

Գուցէ տպաւորութեան այդ վաղանցուկ բընաւորութիւնն է, որ մի առանձին քնքշութիւն է տալիս մեծ դերասանների յիշատակին: «Ամեն մարդու մահով չքանում է մի ամբողջ տիեզերք», ասել է Հէյնէ:

Ոչ ոքի վերաբերմամբ այդ այնքան ճիշդ չէ, որքան տաղանդաւոր դերասանների վերաբերմամբ:

Գեղեցիկ զգացմունքների, բուռն յուզմունքների, վսեմ ձեւերի եւ վեհ պատկերների մի ամբողջ աշխարհ բոլորովին չքանում է նրանց մահով:

Տ. Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւանից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Յունիսի 2-ին, Գրիգոր լուսաւորչի օտնին, Խոր-Վիրապուտ, կաթողիկոսի ներկայութեամբ, հոգեհանգիստ պէտք է կատարվի Աղաւթեանի մահվան տաճարմեակի առիթով: Սիրանոյշ, Պետրոսեան»:

Մեզ հեռագրում են Ղաւարուից. «Այսօր Խոր-Վիրապուտ, կաթողիկոսի ներկայութեամբ, պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց

*) Պ. Տոնապետեան, «Քսան» հինգ ամեայ բնական գործունէութիւն Պ. Աղաւթեանի:

կայութիւն, որ Արիստակէս եպիսկոպոսն անողը լինելու չափ հաստատ է եղել նոր տեղերի համար ուսանելիքի ձեռնադրելու եւ քահանաների թիւը սահմանափակելու մէջ (եր. 78): Եկէք այժմ ու հասկանալ Մեսրոպ քահանային: Երբ Արիստակէս եպիսկոպոսը գիւղերի համար է հոգս անում, նա գերեզմանից դուրս է կանչում Բարեպետներին, հրեշտակներին անաբելիչ զենքեր է երկնքից կանչում: Իսկ երբ նոյն եպիսկոպոսը թիֆլիս քաղաքի մասին է մտածում, նա սկսում է բղաւել. «Վայ, գաւառները կորան»...

Ո՛չ, սա քննադատութիւն չէ. սա հասարակ բարեխղճութիւն, ազնիւ վերաբերմունք էլ չէ...

Եւ վերջացնում եմ, թողնելով դեռ շատ ու շատ բան: Զգում եմ, որ առանց այդ էլ բաւական ի չարք գործ դրի իմ ընթերցողի ուշադրութեանը:

Մի պարտք էլ ունեմ կատարելու, իբրեւ այս գրքի մասին խօսող: Մեսրոպ քահանան մի տեղ մեծ գովաւանքով ու ոգեւորութեամբ է խօսում Արիստակէս եպիսկոպոսի մասին: Դա քահանաներին ոռնիկ նշանակելու հարցն է: Այլ, ասում է Մեսրոպ քահանան, միանգամայն համակրելի, օրինաւոր (?) եւ արդար են սրբազան Արիստակէսի խօսքերը, թէ ժամանակն արդէն գրել է մեր առաջ այդ հաստատութեան պահանջը եւ հայ հասարակութեան իրաւունքն ու պարտքն է ի կատար ածելը: Այսպէս խօսում է մի քահանայ, որ չէ քաշվել ամեն տեսակ միջոցներից՝ Արիստակէս եպիսկոպոսին վիրաւորելու եւ անուանարկելու համար: Ինչպէս է, որ Մեկնան քահանան համարեա իւրաքանչիւր տողում «սուտ», «ծածուկ», «անշիջեալ» եւ այլ այդպիսի բառեր չըռնելով Արիստակէս եպիսկոպոսի գէմ, յանկարծ բարեհաճում է հաւանել նրան, նոյն իսկ գովել: Գաղտնիքը ձեր առջեւ, ընթերցող, բաց անելու համար եւ ինձ թոյլ կը տամ արտա-

տաղանդաւոր դերասան Պետրոս Աղաւթեանի մահվան տաճարմեակի առիթով: Մենք երբեմն Տէր-Վարդանանց, Արքայի խաչատուր Սահակեանց, Կոստան Գոշարեանց, Արշակ Տէր-Պաւլատեան, Յովակիմ Տէր-Պաւլատեան, Միսաք Զաղինեանց, Յովհաննէս Արամեանց, Յակոբ Դաւթեանց, Արշակ Իսկանդարեան, Յակոբ Պանդեպեան, Տիգրան Յարութեան:

Մենք հաղորդել էինք, որ երկրագործութեան զեպարտամէնտի կողմից ուղարկված մասնագէտ Ն. Սօկօլով եւ ագրոնոմ Ա. Սահակեան ուղեւորվեցին Ախալքալաքի գաւառը հետազոտելու վնասակար միջամտելուն: Նրանք այցելեցին գիւղերը եւ գտան մեծ քանակութեամբ մաւրիտանեան մուկ (маврский мул), Դիլիսկա, Վաչիան, Չանդուրա, Գիւմուրջօ, Պոսպիւր եւ Կուլալիս գիւղերի գաւառներում, որոնք արդէն երկու տարի շարունակ վնասվել են այդ մուկներից: Նրանք ներկայումս դեռ մեծ աւերումներ չեն կատարել, բայց սկսել են երեւալ նորարոգութիւնը քարնաւանդան հացաբոյսերի վրա: Պէտք է նկատել, որ այնպիսի անհաշու աւերակները հոտեմաւորութեան մուկից: Մասնագէտները, ուսումնասիրելով մուկի կենսաբան, հակվում են այն կարծիքին, որ մուկը ձմերուկ է արտադրում: Յունիսի վերջին, երբ դուրս գան մուկի թրթուռները, պ. պ. Սահակեան եւ Սօկօլով նորից գալու են մեր գաւառը մի քանի փորձեր կազմակերպելու մուկը ոչնչացնելու համար եւ կանեն հետազոտութիւններ այն մակարոծի (պարսկերէ) վերաբերմամբ, որ ապրում է այդ մուկի ձուերի մէջ եւ սնվում է այդ ձուերի հիւթերով: Պ. Պ. Սահակեան եւ Սօկօլով ենթադրում են որ իրանց վերադարձած ժամանակ գուցէ գտնեն այդ մակարոծներից, որոնք կարող են ոչնչացնել այդ ձուերը, ինչպէս այդ տեղի է ունեցել իրարկովի, Ստալիքայօլի նահանգներում, Կրիմում եւ ուրիշ տեղերում:

Մեզ հաղորդում են, որ նորերս ձեռնադրված Գարեգին եպիսկոպոս Սաթուհեան նշանակված է Սանահին վանքի վանահայր:

ԲԱՊՈՒԻՑ մեզ գրում են. «Այս տարի Բագրի բէլական գաղութում երեսուն եւ հինգ աւարտողներից տասն եւ հինգը հայեր են: Աւետիսեան Ար., Գեանջուհեան Ի., Գիւլնազարեան Փ., Գուրիշաճարեան Ա., Եղիազարեան Լ., Ղաւարեան Մ., Մամեան Մ., Մանուէլեան Գ., Մէլիք-Շահնազարեան Մ., Միրզաբէկեան Լ., Մնացականեան Ս., Յովսէփա-

զրել Արիստակէս եպիսկոպոսի գրքից մի տող, որ հետեւում է Մեկնան քահանայի առաջ բերած կտորին: Արիստակէս եպիսկոպոսը գրել է, որ քահանաներին ոռնիկ նշանակելու հարցի մէջ «Բաթումի հայ հասարակութիւնն արդէ նախաձեռնութեան օրինակ տուել է»: Բաւական է, չէ: Հօ գիտէք, որ ոռնիկ նշանակելու հարցը Բաթումում արժանաւոր Մեկնան քահանան է եղել...

Գաղտնիքը բացվեց: Մի փոքրիկ, խնդ «ես» չորոքորթված է այստեղ եւ գովաւանքներ է արտայայտում: Ահա մեր մեծախոս քննադատը...

Ի վերջոյ, ես չեմ կարող ամենայն հաճութեամբ չարտագրել այստեղ Մեսրոպ քահանայ Մեկնանի հետեւեալ տողերը. «Դուք, սրբազան տէր, ձեր այս վերջին գրքով գալիս էք ուրիշներին մեղադրելու հետ միատեղ մե, հիասթափեցնելու ձեր գործ ունէ ութ եւ վերաբերմամբ: Մեսրոպ քահանան ոգեւորվածներից մէկն էր, այժմ հիասթափվել է: Նրա գրքի մէջ միակ միջնորդական երեւոյթն սա է: Շատ ցաւալի, շատ անպատեւ հանգամանք կը լինէր, եթէ Մեսրոպ քահանան, ունենալով այդպիսի գաղափարներ, այդ տեսակ հասկացողութիւններ եւ ժամանակ չընդունակ լինելով այդ տեսակ միջոցների, դեռ չէ հիասթափվել, դեռ իրան ցոյց տար Արիստակէս եպիսկոպոսի կողմնակից: Դա կը լինէր մի շախտոյթ թիւրիմացութիւն:

Եթէ հիասթափվողը լինէր աւելի բարձր գաղափար, աւելի ազատամիտ, արմատական հասկացողութիւնների, աւելի խիստ պահանջների տէր մարդ, մենք պարտաւորված կը լինէինք մտածել: Գուցէ Բայց Մեսրոպ քահանան... նրա պէս հարիւրներ կան մեղանում: Մէկը մեր սովորական տէրութիւններից: Եւ ինչ է եկել մեզ ցոյց տալու Մեկնան քահանան նա գրեց մի գիրք, որով խաչ գրեց իր գոյութեան վրա...

Լէօ

նեան Ս., Նաղարէկեան Ա., Սաղաթէլեան Ա., Տէր-Իսարայէլեան Մ.: Սրանք բոլորն էլ, սակաւ բացառութեամբ, մտադրութիւն ունեն ուղեւորվել դէպի մայրաքաղաքը:

ՀՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Բազմոցները ամառանոց են գալիս մեզ մօտ. արդէն սկսվել է հոսանքը: Մեզանում լաւ եղանակներ է առնում. դիֆտերիա միանգամայն վերացաւ. ոչ մի հիւանդութիւն այլ եւս գոյութիւն չունի մեզանում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ՀՈՒՐԵՐ

— Խորհրդանշալից հաղորդում են, որ թէ պէտ իրենի առողջական դրութեան մէջ տեղի ունեցաւ փոփոխութիւն դէպի լաւը, այնու ամենայնիւ, նոր դրութիւնը երկրագալի է: Նա ոչ ոքին չէ թողնում հոգ տանել իր մասին, բացի իր կնոջից, որը գիշեր եւ ցերեկ չէ հեռանում նրանից: Իրեն շատ ուժեղ սպառ է եղել եւ դժուարութեամբ է խօսում: Ամբողջ հասարակութիւնը Խորհրդանշալում մեծ հետաքրքրութեամբ է հետեւում նրա հիւանդութեան ընթացքին:

— Լրագիրների խօսքով, Եսայիայի ֆիշանասկան դրութիւնը շատ կրիտիկական է: Մինչեւ անգամ իրանք պետական պաշտօնեաները չեն ծածկում այդ բանը եւ խոստովանում են, որ իրանք չը գիտեն, թէ վերջը ինչ է լինելու: Կառավարութիւնը այժմ 66 միլիոն ենի կարիք ունի, բայց անկարող է գտնել այդ գումարը ոչ իր սեփական երկրում, ոչ էլ Եւրոպայում: Մարկիզ Իսո, ինչպէս հաղորդում է Եսայիայի մի լրագիր, ասել է, թէ չը գիտէ ինչ անել: Ամենայն դէպքում կը լինէր իսկոյն եւ եթէ զարգացնել սկսած խոշոր հասարակական աշխատանքները, բայց կառավարութիւնը չէ վստահանում մի այդպիսի քայլ անել:

ԽԱՌՆ ՀՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ի Ա Ն Կ Ա Ր

Խօսակցութիւնը տեղի ունէր Թիֆլիսի ընտանիքներից մէկում ճաշից առաջ:

— Ահա քանի օր է, որ մեր հայրիկը չափազանց ուրախ է, ասացին աղջիկն ու տղան իրանց մօրը:

— Այո, ճշմարիտ է, նա աւելի ուրախ տրամադրութեան մէջ է, քան լինում է սովորաբար, պատասխանեց մայրը:

— Ինչ գեղեցիկ է այն այրումը, որ նուրիքից ինձ երէկ հայրիկը, ասաց աղջիկը:

— Ես երբեք ինչ եմ հայրիկի ինձ նուրիքած լուսանկարչական գործիքից, վրա բերեց տղան: Ես վաղուց խնդրել էի, իսկ հայրիկը միշտ մերժում էր: Վերջապէս ես ստացայ իմ ուզածը:

— Լաւ է, լաւ, ժպտալով ասաց մայրը. ես էլ առանց նուէրի չեմ մնացել, ձեր հայրը ինձ նուրիք մի թանկագին քորոց:

— Ո՛ր է, ուր, մենք չենք տեսել, վեր թռչելով բացականչեցին զաւակները:

— Դեռ չէ բերված, պատասխանեց մայրը: Ոսկերիկն ասէ՛ք: Երէկ ձեր հօր հետ գնացինք տեսնել: Ոսկերիկը պէտք է նորից մաքրէր քորոցը: Այսօր հայրիկը կը բերէ:

Շուտով եկաւ եւ տան գլխաւորը: Նա ձեռքին բռնած ունէր ծաղիկներ, որ գնել էր փողոցում: Մաղիկները տունը աղջկան ու որդուն:

— Այս էլ քեզ, դիմեց նա իր կնոջը: Նա հանեց իր գրպանից մի փոքր արկղ եւ տունը իր կնոջը ու ինքը դիմեց դէպի սեղանատուն:

Մայրը իր զաւակներով զբաղվեցին քորոցով, որը շատ հաւանեցին:

— Եստ լաւն է, ասացին նրանք իրանց հօրը, որ վերադարձաւ նրանց մօտ:

— Վաղը ճաշից յետոյ մենք կը գնանք քաղաքից դուրս գրօնելու, ես կառք եմ պատուիրել: Ինչպէս էք հաւանում իմ արածը:

— Եստ լաւ է, շատ լաւ:

— Վաղուց է, որ նրանք զբօսանքի նպատակով կառք չէին նստել:

Ինչ որ մի բարեփոխութիւն էր կատարվել հօր գործերում: Ինչ որ մի ուրախագիծ դէպք էր տեղի ունեցել:

— Զախ ժամանակ հայրը յայտնեց, որ նա վրձն է վարձել առաջիկայ ամառը մի գեղեցիկ ամառանոց:

Հետեւեցին հրճուանքին սահման չը կար:

— Զախից յետոյ մարդ ու կին գնացին հիւրասենեակ:

— Փոքր ինչ հնացել է մեր տան սարք ու կարգը, ասաց մարդը:

Կինը այն քայլեր:

— Բաւական հնացել է, կամաց արտասանեց կինը. ես շատ եմ մտածել. բայց ինչ կարող ենք անել:

— Ես վրձն եմ, ժպտալով ասաց մարդը, մի վերանորոգութիւն անել. պէտք է լաւ վարպետի լանձնել:

Ամիսներ եւ տարիներ շարունակ կինը հրա-

ւորում էր իր ամուսնու ուղադրութիւնը տան անջութեան վրա եւ միշտ մերժումներ էր հանդիպում. իսկ այժմ մարդը ինքն էր առաջարկութիւններ անում:

— Ի՞նչ արդեօք հանաք չեմ անում, հարցրեց նա իր ամուսնուց:

— Ինչու պէտք է հանաք անեմ, պատասխանեց մարդը: Ձեռն հաւատում ասածներս:

— Բայց մինչեւ այժմ ինչու...:

— Ինչու մինչեւ այժմ չէի անում, որովհետեւ աւելորդ փող չունէի:

— Իսկ այժմ:

— Այժմ ունեմ, հանդիսաւոր կերպով արտասանեց մարդը:

— Ո՞րտեղից է, ինչ փող է:

— Դէ՛ն լսիր:

Ամուսնուներ հանգիստ նստեցին գահաւորակի վրա: Տղամարդը նկարագրեց իր գործերի դրութիւնը եւ իր քաջած ներդրումները:

— Ի՞նչ գիտեմ, ասաց նա, որ ես փողի ներդրում ունիմ ու ուզում էի ծախել Օրթաճալու այգին եօթ հազար ռուբլով ու անող չէի գտնում: Իսկ այժմ ուղող կայ, ինչ ես կարծում, քանիսով: Ձեռն հաւատայ, որ ասեմ: Տասն ութ հազարով:

— Ի՞նչ ես ասում, բացականչեց կինը:

— Զիչդ խօսք է: Գործը վերջացրինք. փողի մի մասը արդէն ստացայ: Այժմ պարտքս էլ կը տամ, տունն էլ կը գրասենք ու մի բան էլ կը մնայ:

Կնոջ համար պարզվեց հանելուկը: Սակայն նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու հողի գինը այդպէս յանկարծ բարձրացաւ:

— Ի՞նչ պատահեց այդ հողի հետ, խօս ոսկու հանք չը գտնվեց այնտեղ, հարցրեց նա:

— Ո՛վ գիտէ, պատասխանեց մարդը: Մէկն ասում է թէ ձիաբաշ պէտք է անցկացնեն մինչեւ Օրթաճալ, միւսը պատմում է թէ գործարաններ պէտք է չինվեն այնտեղ: Խօսք ու զրոյց չառ կայ:

Կինն ընկաւ ինչ որ մի զմայլմունքի մէջ: Նրա առաջ բացվեց զանկութիւնների մի նոր աշխարհ: Նա տարիներով իրան գտակ էր եւ զրկել վայելքներից: Այժմ կարելի էր շատ բան իրազեկուել:

— Այս մեր տունը, շարունակեց տղամարդը, որ չարժէր 40,000 ռուբլուց աւելի, այժմ, գիտեմ, գնահատում են 70,000 ռուբլի:

— Ի՞նչ ես ասում, զարմացած հարցրեց կինը: Այստեղ ինչ փոփոխութիւն է կատարվել, ինչ բան է աւելացել. դեռ եթէ ուղիղն ասենք, տունը հնացել է, վատացել է:

— Պատճառը ես էլ չը գիտեմ. բայց ասածս հաստատ բան է: Բնակարանների վարձը առաջվանն է ու մի քանիսին նոյն իսկ պակսել է, բայց տան գինը բարձրացել է:

— Հարաք է, ինչ որ մի հրաք է, ասաց կինը եւ վերկայաց տեղից:

— Հարաք է, հրաք չէ, բայց մէջտեղ մենք օգտվում ենք, չեղանք տղամարդը եւ նոյնպէս վերկայացաւ:

Հրաքն ընդհանուր էր ամբողջ Թիֆլիսի համար: Բոլոր տները թանկացան: Հազար ռուբլի արժողութեան կայք ունեցողը այլ եւս չէր ուզում երկու երեք հազար ռուբլու անունը լսել: Հարկեր հազար կայքի տէրը միլիոնների մասին էր երազում:

Մենք նկարագրեցինք հազար օրինակներից միայն մէկը:

Սկսվեց իրարանցում քաղաքի մէջ, ողբերգութիւն, յուզմունք, բոսայիւն խաղ, ածիւտաժ...

Հրաքն ունէր իր հետեւանքները: Կայքերը մի բանից տեղափոխվում էին միւս բանի: Աւելորդ գնով գրաւ վերցնելու համար: Հողերը ձեռքից ձեռք էին անցնում բարձր գներով: Իւրաքանչիւր մարդ շտապում էր մի կտոր հող ձեռք գցելու, որպէս զի ապագայում ուրիշին ծախել աւելի թանկ գնով:

Մարդկանց ձեռքին աւելորդ փող էր երեւցնում:

Աւելորդ փողը առաջացրեց աւելորդ ծախքեր: Մագաղիների տնտեսներն աւելացաւ իրազեկներն նոր մագաղիներ, ընդարձակվեցին հները:

Ճոխութիւն ամեն տեղ: Թաւրօն, փողոց, ամառանոցներ, խնջոյքներ, հարսանիքներ, բոլոր սպարքները դարձան չորերով, աղամաններով փայլելու համար:

Եւ Թիֆլիսը փայլեց, երբեք նա այնքան ծոխ եւ նուրբ չէր հագնվել ու զարդարվել, ինչպէս վերջին երկու երեք տարիները: Մէկը միւսին հետեւելով աւելացրել են կեանքի չընթացութիւնը եւ ամենքը ձիգ են թափում յետ չը մնալու:

Սակայն...:

— Ինչ սակայն:

Սակայն հրաքի զմայլանքը սկսում է նսեմանալ:

Աւելորդ փողի համեմատ ծախքեր անելուց յետոյ պէտք էր վերադառնալ նախկին կեանքին:

Իսկ դա շատ դժուար էր:

Տները եւ հողերը թանկացան քաղաքում, իսկ նրանց համապատասխան չաւելացան արդիւնքները: Արհեստը, պարագայները, գործարանի աշխատանքը, բնակարանի վարձը մնացին նոյնը:

Եւ հաւ սկսում է արագորակ արհեստական կերպով ձոխացում կենսը:

Բոլորը գնդգաղութում են իրանց գործերի դրութեան վրա:

Մարդերը աւելացել են, պարտքերը բանկերում եւ մասնաւոր անձանց մօտ աւելացել:

Կրեդիտը ընկնում է եւ պարտամուրհակները այլ եւս հեղուկութեամբ չեն ընդունվում: Մագաղիները սկսել են նկատել գնողների անգործութիւնը եւ կրճատել են իրանց առեւտուրը:

Մանկութիւնների մասին խօսակցութիւնները սկսել են քաղաքացիութիւն ստանալ:

Պարզվում է, որ հրա չը շատ վտանգաւոր հրաք էր, որ էր պէտք էր հաւատալ հրաքին անպայման կերպով:

Մնում է մի միջիթարութիւն բոլոր այն մարդկանց համար, որոնք ընկան հրաքի բաղձ հոսանքի մէջ եւ այժմ ստիպված են իրանց օտները մեկնել վերմակի համեմատ:

— Գոնէ մէկ լաւ քէֆ արինք:

Բայց քանի գրօշ արժէ այդ միջիթարութիւնը, վրձին:

„ՄՇԱԿԻ“ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1 յունիս

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Միջնակարգ դպրոցների բարեփոխութեան յանձնաժողովի նիստում, որ տեղի ունեցաւ մայիսի 31-ին ժողովրդական լուսաւորութեան մինիստրի Նախագահութեամբ, ընկնում էր հիմնական սկզբունքների 4-րդ կէտը: Տաք վիճարկութիւններից յետոյ պարզվեց, որ անդամների մեծամասնութիւնը համակրութեամբ է վերաբերվում այնպիսի առարկաների, ինչպէս են հայրենագիտութիւնը եւ օրէնսդրութիւնը. բացի դրանից, վիճարկանութիւնների չորրորդ օրոյնքին այն նշանակութիւնն ու դերը, որ բարեփոխված դպրոցում ունենալու են նոր լեզուները եւ լատինիզմը: Մնացեալ մանրամասնութիւնների քննադատութիւնը յետաձգված է հետեւեալ նիստին, որ կայանալու է Խարկովի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի Նախագահութեամբ եւ որի ընթիցեւում կազմվելու է դասացուցակը:

Երեկվան հրդեհի մանրամասնութիւնները, ծերեկվայ ժամի հինգի դէմ կրակը սկսեց թռլանալ. քարէ էլինգն ու Օրեթէ կէլէէրը առողջվեց փրկել. «Паллада»-ն մնաց անվնաս:

«Витязь» կրէյսերը եւ նրան ծածկող էլինգը դարձան առկաժողովայնութիւնն ու միտք ածուկների մի ահաղիւս սար: Փնտռանկայի միւս կողմում, միջերկրների պահեստներում, այդ միջոցին այրվում էին արքունապատկան փայտէ մագաղիների մի քանի շարքեր: Այդտեղ ձեռքված խանձողները կարճ միջոցում սարսափելի աւերած գործեցին, — միաժամանակ բռնկվեցին մի քանի ահաղիւս շէնքեր, որոնց մէջ պահվում էին զինուորական վարչութեան պատկանող գնացան իրիզները եւ հացի պաշարներ: Առողջները եղան, թէ մարդիկ են այրվել եւ անհետ կորել են մի քանի երիտասարդ բանասերներ, բայց այդ դեռ չէ հաստատվել: Վրնաններն էլ դեռ չեն որոշված, բայց անկասկած ահագին պէտք է լինէր եւ զգալի կը լինէր ծովային ու զինուորական վարչութիւնների համար. այրվել է մի քանի միլիոն արքունութեամբ արքունի գոյք:

10 ՆՈՒՄԵՐ. Անգլիական բանկը դիսկոնտո իջեցրեց 3 1/2%-ից 30%-ի:

ԳՐՈՒՆԵՐ. Իտալիայի եպիսկոպոսը բազմաթիւ հոգեւորականների հետ առանձին հաղիսաւորութեամբ տօնեց մայիսի 31-ը, ի յիշատակ լուսնային միացման օրթոգոքս եկեղեցու հետ:

ՕՐԵՄԱ. Ժամդարների գնդապետի եւ Օդեսայի գաղտնի ոստիկանութեան պետի վկայութիւններով, ոստիկանական սկզբնական ըննութիւններով եւ Գորիչի ու Վոլոդկիչի պալատի ձեռքի համարանիշներով հաստատվում է, որ Մարիչին է սպանել Գորիչին: Նրա մասնակցութիւնը այդ սպանութեան մէջ հաստատվում է նաեւ այն բանով, որ նա հակառակ բացատրութիւններ է տալիս եւ չէ կարողանում հաւատալ, թէ որտեղ է եղել ինքը Գորիչի սպանութեան գիշերը:

ՊԱՐԻՉ. Սենատում վերսկսվեցին վիճարկանութիւնները ընկերակցութիւններին վերաբերեալ օրինագծի մասին: Մաքսիմ Լըփոստ պաշտպանում է ընկերակցութիւններին ազատութիւն ապահովող օրինագիծը: Մովսիսյան կիւլտիւրի հակահամադր է օրինագիծին, որովհետեւ նա բոլորովին խլում է ազատութիւնը կրօնական միաբանութիւններից եւ ընտանիքների հայրերին զրկում է իրանց զաւակներին իրանց հայեցողութեամբ դաստիարակելու ի-

րաւունքից: Զեկուցանող Վալէ պաշտպանում է օրինագիծը, որից յետոյ Վալէկ-Բուսո բացատրում է այն նկատմամբ, որոնցից դրված կառավարութիւնը ներկայացրեց իր օրինագիծը, որը, Վալէկ-Բուսոյի ասելով, լիովին ազատամիտ օրինագիծ է: Մի քանի կրօնական միաբանութիւնների բարբարոս գործունէութիւնը չի խանգարվի այն բանի չնորհիւ, որ նրանք պարտական են լինելու թողութիւն ստանալ. քանի որ մինչեւ այժմ մեծ ճառագութիւններ մատուցանողները եղել են հէնց թոյլ տրված միաբանութիւնները: Վերջապէս, Վալէկ ասում է, թէ սենատը, օրինագիծը ընդունելով, կը նպաստի ընդհանուր խաղաղացման:

10 ՆՈՒՄԵՐ. Համալսելների ժողով. Համալսում հաղորդում է, թէ Գէլլիի գեկուցման համաձայն, հիմքից զուրկ է լրագիրների հաղորդածը Տեանձինում տեղի ունեցած երկրորդ կոտորածի մասին: Կրանքօրն յայտնում է, որ կառավարութիւնը ոչ մի տեղեկութիւն չէ ստացել գերմանական կառավարութիւնից, իբր թէ գերմանական բերդապահ զօրքը թողնվելու է Շանդհայում: Պատասխանելով ուրիշ հարցերի, Կրանքօրն ասում է, թէ, ինչպէս հաղորդված է կառավարութեան, դաշնակից պետութիւնների զինուորական ներկայացուցիչները անհրաժեշտ են դատել, որ, բացի Պէկինում թողնվելիք դեսպանատանում թողնվի առ այժմ 16,000 հոգի, բայց կառավարութիւնը տեղեկութիւն չէ ստացել, թէ որքան մարդ պէտք է թողնէ իւրաքանչիւր պետութիւն: Հարաւային Աֆրիկայում նշած դրութեան վերաբերեալ հարցին Բալֆոր պատասխանում է, թէ այնտեղ անգլիացիները այժմ պատերազմ են մղում ոչ մեծ զորաւորների դէմ, որովհետեւ բօթիները մեծ մասամբ բաժանվել են փոքրիկ զօրաւորների, որոնց իւրաքանչիւրում կայ հարիւրից մինչեւ երկու հարիւր, իսկ բոլորում միասին 17,000 հոգի: Խաղաղութեան բանակցութիւնների մասին տարածված լուրերը անհիմն են եւ միմիայն քաղաքական գուշակութիւններ են: Սպասելու է, որ պատերազմական գործողութիւնները կը շարունակվեն:

ՇԱՆԴՀԱՅ. «Nord China Daily News» լրագրին հաղորդում են չինական աղբիւրից, թէ Յին եւ Լիւնոնցիանցի ստացել են կայսերական հրովարտակ, որի մէջ համաձայնութիւն է յայտնված պետութիւնների բոլոր պահանջներին, ուստի լաշնագրի ստորագրութեանը պէտք է սպասել յունիսի վերջին:

ԿԱՆԻՅԱ. Մանիպական պատգամաւորները Գեօրգի արքայորդուն յայտարարագիր ներկայացրին, որի մէջ բողոքում են Կրեմլէն Յուստանին միացնելու դէմ: Նոյնպիսի բողոք ներկայացրին նրանք ընդհանուր հիւպատոսներին: Հիւպատոսները չնդունեցին այդ յայտարարագիրը, ինչպէս նաեւ քրիստոնեայ պատգամաւորները յայտարարագիրը:

ՊԱՐԻՉԱ. Կեօրից յետոյ Թրանց-Յովսէփ կայսրը զբօսանք կատարեց քաղաքի մէջ եւ զբօսանքի միջոցին պտտեց զանազան հիմնարկութիւններ: Ստրալոյի ակադեմիան այցելելիս, պատասխանելով նախագահի ճառին, կայսրը հաւատարմութիւն յայտնեց, թէ ասների մէջ զարգանում է միաբանութիւնն ու համերոգութիւնն ոգի եւ հաւատարմութիւն դէպի միապետութիւնը ու հայրենասիրութիւնը: Ամբողջ ճանապարհին ժողովուրդը ողբերգական ողբ էր կայսրին, Երեկոյան Հօֆբրուքում ճաշեկոյնից կայացաւ, որին ներկայ էին միւս նիստերը եւ բարձրաստիճան պաշտօնեաները:

10 ՆՈՒՄԵՐ. «St. James Gazette» հակահամադր է միւս լրագիրներին, որոնք աշխատում են սպառնալ, թէ գերմանական բերդապահ զօրքի մնալը Շանդհայում վնասակար է անգլիական շահերին: Շանդհայում, ուր կան լաւ սահմանադրական մեծ գաղութներ, միջադրային զօրքերի ներկայ

